Հաստատված է

ՀԱԱՀ գիտական խորհրդում

10.11.2023 թ.
(արձանագրություն № 4)

Վավերացնում եմ

ռեկտոր Վ. Ուռուտյան

10 11 2023 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոնակարգով սահմանվում է «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի, այսուհետ՝ Հիմնադրամ կամ Համալսարան, ուսանողներին անվանական կրթաթոշակ տրամադրելու կարգն ու պայմանները:
2. Անվանական կրթաթոշակը գիտության, կրթության, ստեղծագործական ոլորտներում հաջողությունների հասած ուսանողներին տրվող դրամական վճար է:
3. Անվանական կրթաթոշակը սահմանվում է ուսանողների ուսումնական, գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքների խթանման և խրախուսման նպատակով:
4. Անվանական կրթաթոշակները սահմանվում են մեծ ավանդ ունեցող խոշոր գիտնականների, ոլորտի ներկայացուցիչների, գիտության և կրթության երախտավորների անունով:
5. Անվանական կրթաթոշակ սահմանվում է՝ հաշվի առնելով ուսանողի նախորդ չորս կիսամյակների ՄՈԳ-ը (մագիստրատուրայի 1-ին կիսամյակում՝ բակալավրիատի դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների, իսկ հաջորդ կիսամյակներում՝ նախորդ կիսամյակի ՄՈԳ-ը), կատարած գիտական աշխատանքները և հասարակական ակտիվությունը:
6. Կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ֆակուլտետից անվանական կրթաթոշակ կարող է ստանալ առավելագույնը երկու ուսանող:
7. Սահմանված անվանական կրթաթոշակը վերանայվում է յուրաքանչյուր կիսամյակի սկզբում:

8. Անվանական կրթաթոշակ տրվում է Համալսարանի արտաբյուջետային միջոցների և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:
9. Անվանական կրթաթոշակի չափը որոշում է Համալսարանի գիտական խորհուրդը՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին:

2. Անվանական կրթաթոշակի տրամադրումը

2.1 Անվանական կրթաթոշակի տրամադրումն իրականացվում է մրցույթով:

2.2 Անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների թեկնածությունները քննարկում են համապատասխան ֆակուլտետների գիտական և ուսանողական խորհուրդները, ինչի վերաբերյալ հիմնավորված եզրակացություն են ներկայացնում (նիստի արձանագրությամբ) Համալսարանի ուսումնական գործընթացի կառավարման վարչություն:

2.3 Անվանական կրթաթոշակը տրամադրվում է բազմագործոնային համակարգով ամենաբարձր վերջնական միավոր ունեցող ուսանողին:

2.4 Գնահատման ենթակա յուրաքանչյուր գործոնը և գործոնի առավելագույն միավորը ներկայացված է աղյուսակում 1-ում:

Աղյուսակ 1

Գործոնները և դրանց առավելագույն միավորները

Հ/հ	Գործոններ	Առավելագույն միավորը
1	ՄՈԳ	70
2	Կատարած գիտական աշխատանքներ	24
3	Հասարակական ակտիվություն	6

Գործոն 1

Միջին որակական գնահատականը (ՄՈԳ)

Անվանական կրթաթոշակի կարող են հավակնել 3-րդ և բարձր կուրսերի անվճար և վճարովի ուսուցման համակարգում սովորող այն ուսանողները, որոնց ՄՈԳ-ը բակալավրի կրթական ծրագրով ողջ ուսումնառության ընթացքի արդյունքների ամփոփման դեպքում կազմել է հնարավոր առավելագույն արժեքի առնվազն 87 %-ը:

Հաշվարկային կշիռը կարող ենք ստանալ հետևյալ բանաձևով՝ (ՄՈԳ-86) x 5 (առավելագույնը 70 միավոր):

Գործոն 2

Կատարած գիտական աշխատանքներ (ԿԳԱ)

1) ըստ ներկայացված ոլորտների՝ միջազգային գիտական ամսագրերում հրապարակած աշխատանքներ (մինչև 12 միավոր).
   ա) 1 աշխատանք – 3 միավոր,
   բ) 2 աշխատանք – 6 միավոր,
   գ) 3 աշխատանք – 9 միավոր,
   դ) 4 և ավելի աշխատանք – 12 միավոր,

2) ըստ ներկայացված ոլորտների՝ հանրապետական գիտական ամսագրերում հրապարակած աշխատանքներ (մինչև 8 միավոր).
   ա) 1 աշխատանք – 2 միավոր,
   բ) 2 աշխատանք – 4 միավոր,
   գ) 3 աշխատանք – 6 միավոր,
   դ) 4 և ավելի աշխատանք – 8 միավոր,

3) ըստ ներկայացված ոլորտների՝ ներհամալսարանական գիտաժողովների, սեմինարների, ֆորումների մասնակցություն՝ հավաստող փաստաթղթի առկայությամբ (մինչև 4 միավոր).
   ա) 1 մասնակցություն – 1 միավոր,
   բ) 2 մասնակցություն – 2 միավոր,
   գ) 3 և ավելի մասնակցություն – 3 միավոր,
   դ) 4 և ավելի մասնակցություն – 4 միավոր:

Գործոն 3

Հասարակական ակտիվություն (ՀԱ)

1) Համալսարանական հասարակական աշխատանքներում ակտիվության ցուցաբերում՝ Համալսարանի ուսանողական խորհրդի նախագահի հաստատմամբ (4 միավոր):
2) Ներֆակուլտետային հասարակական աշխատանքներում ակտիվության ցուցաբերում՝ ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահի հաստատմամբ (2 միավոր):

2.5 Տվյալ ուսումնական տարվա կամ կիսամյակի ընթացքում որևէ ֆակուլտետում անվանական կրթաթոշակի պահանջները բավարարող հավակնորդների բացակայության դեպքում այդ տեղը (տեղերը) Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ ժամանակավորապես կարող է հատկացվել այլ ֆակուլտետի՝ հավակնորդների առկայության դեպքում:

2.6 Համալսարանում սահմանված են ստորև ներկայացված անվանական կրթաթոշակներն՝ ըստ ֆակուլտետների:

Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի ուսանողների համար՝

Գյուտարար Ասատուր Սարաֆյանի (Օսկար Բենկեր) անվան:

Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողների համար՝

Տնտեսագետ Վահան Թոթոմյանցի անվան:

Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի ուսանողների համար՝

Ակադեմիկոս Սերգեյ Մովսեսյանի անվան:

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի ուսանողների համար՝

Կոնյակագործ Մարգար Սեդրակյանի անվան:

Ագրոնոմիական ֆակուլտետի ուսանողների համար՝

Ակադեմիկոս Արմեն Թախտաջյանի անվան:

2023 թվականի նոյեմբերի 11-ից ուժը կորցրած ճանաչել Համալսարանի գիտական խորհրդի կողմից 22.04.2021 թ. հաստատված «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամում անվանական կրթաթոշակ տրամադրելու» կանոնակարգը: